II

ՀԱՅՐԵՆԻՔՆ ԻԲՐԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱ. ՏԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

Հայրենիքի հասկացությունը պատմական կատեգորիա է, որը սկսել է սաղմնավորվել տոհմատիրական հասարակության ավարտական փուլում, երբ անցում էր կատարվում նախնադարյան համայնական կարգերից դեպի ստրկատիրություն: Այդ հասկացության սաղմնավորումը կապված էր նստակեցության հետ, որն իր հերթին պայմանավորված էր երկրագործության զարգացմամբ: Կապը հողի հետ իբրև կերակրողի անխուսափելիորեն ծնում էր հայրենիքի զգացողության սաղմեր: Բնական է, որ որսորդությամբ ու հավաքչությամբ նախամարդը հաստատապես չէր կապվում հողին, տեղանքին, դրանց տերը լինելու գաղափարը չէր սաղմնավորվում նրա մոտ:

Մեծ մասշտաբներով հողագործությունը՝ դաշտավարությունը, Ֆ. Էնգելսը տեղադրում է բարբարոսության վերին աստիճանում, միաժամանակ նշելով, որ բարբարոսությունը անասնապահություն և երկրագործություն մտցնելու ժամանակաշրջանն է, մարդկային գործունեության օգնությամբ բնության մթերքների ավելացման եղանակներին տիրապետելու ժամանակաշրջանը[1]: Նա երկրագործությունն անվանում է «արտադրության վճռական ճյուղը ողջ հին աշխարհում»[2]:

Ամերիկյան մարդաբան Կոնրադ Ֆիլիպ Կոտտակը գտնում է, որ մարդկության կյանքում իսկական հեղափոխություն է եղել սննդի արտադրությունը, այսինքն՝ բույսերի և կենդանիների վերարտադրությունը մարդու կողմից: «Դրեթե 10000 տարի առաջ,– գրում է Կոտտակը,– ավելի քան մեկ միլիոն տարի հետո, որի ընթացքում մարդկային էակները գոյատևել են բնական պաշարներ հայթայթելով, սննդամթերքի արտադրությունը հիմնված բույսերի մշակության և կենդանիների ընտելացման վրա փոխարինեց որսորդությանը և հավաքչությանը շատ տարածքներում»[3]: Խոսելով այդ տարածքների մասին Կոտտակն ընդգծում է, որ սննդամթերքի արտադրությունը սկսվել է 12000 կամ 10000 տարի առաջ Միջին Արևելքում: Նա Միջին Արևելքի բնակիչներին անվանում է աշխարհի առաջին հողագործները և անասնապահները, նկատի ունենալով աշխար-

---

1 Ф. Э н г е л ь с. Происхождение семьи, частной собственности и государства. М., 1985, с. 29.

2 Նույն տեղում, էջ 171:

3 C o n r a d Ph. K o t t a k . Antropology. The exploration of human diversity. New York, 1991, p. 157.

հագրական այն դոտու բնակիչներին, որտեղ հնդեվրոպացի հայերի բնօրրանն է՝ Հայկական լեռնաշխարհը[4]:

Ցորենը և գարին առաջին անգամ մշակել են հնդեվրոպական նախահայրենիքում: Ըստ Կոտտակի, դրանից միայն 3000–4000 տարի անց հացաբույսեր սկսել են մշակել Արևմտյան կիսագնդում՝ Մեքսիկայի տարածքում[5]: Ինչ վերաբերում է Արևմտյան Եվրոպային, ապա այնտեղ սննդամթերքի արտադրությունը սկսվել է 5000 տարի առաջ, Հյուսիսային Եվրոպայում դրանից 500 տարի ավելի ուշ[6]:

Նստակեցությունը հայրենիքի գաղափարի ձևավորման որոշիչ պայման է և երևան է եկել ձկնորսության ու արորային երկրագործության հետ միասին, հաստատուն նստակեցությունը մեծ գետերի ափերին բնակվող և ձկնորսությամբ զբաղվող, նաև Ասիայի և Հյուսիսային Ամերիկայի ծովեղերքին գազանների որսով զբաղվող ցեղերի մոտ ծագել է նեոլիթի սկզբին[7]: Կոտտակը ևս նշում է, որ, ըստ ականավոր հնագետ Վ. Գորդոն Չայլդի, սննդամթերքի արտադրությունը՝ բույսերի մշակությունը և կենդանիների ընտելացումը սկսվում է նոր քարի դարում[8]:

Ն. Ա. Մաշկինը նշում է, որ գերմանացիների մասին գրած երկի մեջ Տակիտոսը «կարելի է կարծել, նշանակություն է տվել բնական պայմաններին և ժողովուրդների տնտեսական կյանքին»[9]: Իրապես, Տակիտոսը այդ գործոնները շատ է կարևորել, քանզի դրանք պայմանավորել են նստակեցությունը, որն էլ ընկած է հայրենիքի հասկացության հիմքում:

Էթնիկական խմբերի էվոլյուցիայի, դրանց տարաբաժանման, ժողովուրդների ու ազգերի ձևավորման հետ մեկտեղ աստիճանաբար խորացել է նաև հայրենիքի հասկացությունը: Բնականաբար, նախնական շրջանում այն ընկալվել է իբրև որոշակի տարածք զբաղեցնող էթնոսի սեփականություն: Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը նպաստել են հայրենիքի գաղափարի խորացմանը, քանզի էթնոսի անդամները սկսել են իրենց զբաղեցրած և իրենց կերակրող տարածքին նայել իբրև ընդհանուր ունեցվածքի: «Մշակվող հողը դեռևս մնում էր որպես ցեղի սեփականություն և տրվում էր օգտագործման՝ սկզբում տոհմին, ավելի ուշ՝ բուն տոհմի կողմից տնային համայնքներին, վերջապես՝ առանձին անձանց: Նրանք կարող էին ունենալ հողի նկատմամբ տիրելու որոշակի իրավունքներ, բայց ոչ ավելին»[10]: Առանձին ընտանիքը դառնում է հասարակության տնտեսական միավորը: Բայց մարդը դեռևս հեռու է հայրենիքի գաղափարից, չնայած մասնավոր սեփականության երևան գալուց հետո էլ նրա մոտ մնում է ցեղի զբաղեցրած տարածքի՝ ընդհանուրի սեփականություն լինելու մտայնությունը: Բնակչության խտության աճը մարդկանց մղել է ավելի սերտ համախմբման ինչպես ներսում, այնպես էլ արտաքին աշխարհի հանդեպ: Առաջանում է ընդհանուր տարածքը ընդ-

---

4 Նույն տեղում, էջ 180:
5 Նույն տեղում, էջ 169:
6 Նույն տեղում, էջ 161:
7 Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան (ՀՍՀ). հ. 8, Երևան, 1982, էջ 397:
8 Conrad Ph. Kottak. Նշվ. աշխ., էջ 180:
9 Н. А. Машкин. История древнего Рима. Л., 1948, с. 25.
10 Ф. Энгельс. Նշվ. աշխ., էջ 185:

հանուր ուժերով պաշտպանելու անհրաժեշտության գիտակցումը, որը կարևոր փուլ է հայրենիքի գաղափարի ձևավորման համար: Ամենուրեք ագգակից ցեղերի միությունը դառնում է անհրաժեշտություն և շուտով անհրաժեշտություն է դառնում նաև նրանց ձուլումը և առանձին ցեղային տարածքների միաձուլումը մեկ, ողջ ժողովրդի ընդհանուր տարածքի մեջ[11]: Սա արդեն շատ կարևոր և նշանակալից քայլ էր դեպի հայրենիքի գաղափարի վերջնական ձևավորումը:

Հաջորդ առավել կարևոր քայլը պետությունն է, որը մարքսիզմը համարում է դասակարգերի առաջացման արդյունք և նրան վերագրում է զուտ դասակարգային գործառնություն՝ դիտելով պետությունը որպես մի դասակարգի իշխանությունը մեկ այլ դասակարգի նկատմամբ պահպանելու գործիք: Սակայն դրանով չի սպառվում պետության դիալեկտիկան, քանզի պետությունը ծագել է նաև ընդհանուր պահանջների անհրաժեշտությունից՝ ընդհանուր ունեցվածքը արտաքին ոտնձգություններից պաշտպանելու համար: Ամենից առաջ պաշտպանվում էր ընդհանուր տարածքը և այն ամենը, ինչը գտնվում էր այդ տարածքի վրա և նրա ընդերքում, անկախ պատկանելությունից: Այս տեսանկյունից պետությունը նույնացվել է հայրենիքի հետ: Արտաքին վտանգը և պայքարը դրա դեմ նպաստել են հայրենիքի գաղափարի ամրապնդմանը: Տիտուս Լիվիուսը մ.թ.ա. II դ. իրադարձությունների մասին խոսելիս, ճակատամարտի բռնված հռոմեացիների և ալբանացիների համար գործածում է «հայրենիք», «հայրենիքի ճակատագիր», ինչպես նաև «հայրենական աստվածներ» հասկացությունները[12]: Այդ հասկացությունների ձևավորմանը և արմատացմանը խիստ նպաստել են պաշտպանողական պատերազմները, որովհետև հայրենիքը կորցնելը հավասարազոր էր ունեցվածքը և ազատությունը կորցնելուն, ստրկացվելն անխուսափելի էր, իսկ ֆիզիկապես ընաջնջվելը խիստ հավանական: Հայրենիքի պաշտպանությունն ու պահպանումը հավասարազոր էր ինքնապահպանմանը: Երբ հայրենիքի գաղափարը դառնում է գիտակցված իրողություն, մարգը, որոշակի պայմանականությամբ, իրեն զգում է ոչ միայն իբրև իր, այլև իր ցեղակիցների ունեցվածքի, այսինքն՝ ողջ երկրի տեր: Այլ կերպ ասած, վերացականորեն ջնջվում են սահմանները մարդկանց սեփականաբաժինների միջև, թեև ամբողջի պաշտպանության և պահպանման անհրաժեշտությունը թելադրվում է սեփականը պաշտպանելու և պահպանելու ձգտումից և այն իրողության գիտակցումից, որ միայնակ անել այդ ամենն անկարելի է, և պետք է միավորվել էթնիկական ընդհանրության սկզբունքով:

Ն. Մաքիավելին մեծ նշանակություն է տալիս ինքնապաշտպանության նպատակով մարդկանց համախմբմանը որոշակի տարածքներում, որը վճռական կարևորություն ունի հայրենիքի գաղափարի ձևավորման համար: Բոլոր քաղաքները, գտնում է Մաքիավելին, կառուցվել են կամ տեղաբնիկների, կամ էլ օտարների կողմից: Տեղաբնիկներն իրենց ավելի քիչ էին անվտանգ զգում ցրիվ ապրելու պատճառով, քանզի նրանցից յուրաքանչյուրի համար անհնար էր մեկուսի դիմադրել թշնամու հարձա-

11 Տե՛ս նույն տեղում, էջ 189:

12 См. Тит Ливий. История Рима от основания. Т. 1, М., 1989, с. 31.

կումներին: Թշնամու մոտենալու պահին ժամանակին համահավաքվելու դժվարությունը, իրենց բնակատեղիները նահանջելիս լքելու անխուսափելիությունը՝ թողնելով դրանք հարձակվողներին իբրև ավար. ահա այն դրդապատճառները, որոնք, Մաքիավելիի կարծիքով, որևէ երկրի առաջին բնակիչներին ստիպել են քաղաքներ կառուցել՝ այդ վտանգներից խուսափելու համար: Այդպես են կառուցել Աթենքն ու Վենետիկը[13]:

Հավանաբար, այդպես է ծագել «պոլիսային կուլտուրան» Հին Հունաստանում և Հին Հռոմում և միջնադարյան Իտալիայում: Այս հանգամանքը ոմանց առիթ է տվել պոլիս պետության շրջանակներում ամփոփել հունական հայրենասիրությունը, որը սխալ է և հերքվում է հույն-պարսկական պատերազմի ժամանակ համահելլենական դիմադրության փաստով, իսկ միջնադարյան Իտալիայում՝ Լոմբարդական լիգայի պայքարով ընդդեմ Հռոմեական սրբազան կայսրության: Ուստի «հայրենիք» հասկացությունը չի կարող ամփոփվել մեկ քաղաքի շրջանակներում: Նախ, նույն երկրի տարածքում միևնույն ինքնապաշտպանական նկատառումներով կառուցվել են և այլ քաղաքներ: Այնուհետև, համընդհանուր վտանգի դեպքում միավորվել են տվյալ երկրի բոլոր քաղաքները և ընդհանրապես բնակչությունը՝ ընդհանուր թշնամուն դիմակայելու համար: Անշուշտ, ոմանք կառուցել են քաղաքներ իրենց անունը հավերժացնելու համար և անվանել դրանք իրենց անունով: Բայց, որպես կանոն, մարդիկ համախմբվել են քաղաքներում ժանտախտից խուսափելու, պատերազմի կամ սովի պատճառով, որոնք «ամայացնում են մայրենի երկիրը» և մարդիկ փնտրում են նորը[14]: Հետևաբար, «հայրենիքի» գաղափարի ձևավորումը սերտորեն կապված է եղել որոշակի տարածքի, այնտեղ ապրող, աշխատող և այն քաղաքակրթող էթնոսի արտադրական ու մշակութային համատեղ գործունեության, գոյատևման համար կոլեկտիվ պայքարի հետ և տեղի է ունեցել երկարատև գործընթացի արդյունքում:

«Նոր աշխարհում», Կոլոմբոսի ափ իջնելուց առաջ, ապրում էին «հավանաբար տաս միլիոն բնիկ ամերիկացիներ», որոնց 90 տոկոսը ոչնչացվել էր Կոլոմբոսի հայտնագործությունից մեկ հարյուրամյակ անց[15]: Հնդկացիական ցեղերը կատաղի դիմադրություն ցույց տվեցին նվաճողներին: Նրանք պաշտպանում էին իրենց բնակատեղիները, որոնք հաճախ փոքր էին թվով և ոչ մշտական: Բայց կային և շատ մշտական բնակատեղիներ, ինչպես Միսսիսիպիի հովտի ստորին մասում: Ավելին, որոշ հնդկացիական ցեղեր ստեղծել էին ապշեցուցիչ քաղաքակրթություններ, ինչպես ինկերը՝ Պերուում, ացտեկները՝ Մեքսիկայում, մայաները՝ Կենտրոնական Ամերիկայում: Նրանք ունեցել են տյն ժամանակվա համար զարգացած հողագործություն՝ ոռոգման համակարգով, կառուցել են քարից քաղաքներ, բազմահարկ շենքեր[16]: Ամերիկյան հնդկացիները մշակել են ծխախոտ, եգիպտացորեն, կարտոֆիլ, պոմիդոր, որոնք հայտնի չէին եվրոպացիներ-

---

13 N i c o l a s M a c h i a v e l. Discour sur la premiere Decade de Tite-Live. Paris, 1980, p. 35.

14 Նույն տեղում, էջ 36:

15 D a v i d M. K e n n e d y, T h o m a s A. B a i l y, M e l P i e h l. The Brief American Pageant. A History of the Republic, second ed., Lexington,1989, p. 3.

16 Նույն տեղում:

րին: Նրանք ընտելացրել են լաման, որովհետև ընտելացման ենթակա այլ կենդանի Արևմտյան կիսագնդում չկար:

Անտարակույս, հնդկացիական ժողովուրդներից առավել զարգացածների մոտ, որոնք ստեղծել են պետականություն, գոյություն է ունեցել հայրենիքի գաղափարը:

Մինչև եվրոպացիների դալը, ներկայիս ԱՄՆ-ի տարածքում գտնվող հնդկացիական ցեղերը շարունակում էին ապրել ցրիվ, նրանց միջև կար փոխադարձ թշնամանք, նրանք չէին համախմբվել դեռևս այնպիսի հանրությունների մեջ, որոնք տանում էին դեպի հայրենիքի հասկացության ըմբռնումը և պետականության ձևավորումը: Սակայն դրա հետ մեկտեղ նրանք կապված էին իրենց բնակատեղիներին և դա պայմանավորված էր հնդկացիների տնտեսական գործունեության և ապրելաձևի առաձնահատկություններով: Այդ ապրելաձևը խաթարելը, հնդկացիական ցեղերին իրենց ապրելատեղերից վտարելը, այսօր էլ ԱՄՆ-ի տարածքում գոյատևող անջրդի և անպտուղ ռեզերվացիաներում փակելը, որտեղ ներկայումս ապրում է նրանց 40 տոկոսը, աստիճանաբար զրկեց նրանց համախմբվելու հնարավորությունից: Եվ հայրենիքի գաղափարը չարմատացավ և չէր կարող արմատանալ ցրիվ ռեզերվացիաներում ապրող հնդկացիների մոտ: Նրանք նույնիսկ չինտեգրացվեցին եվրոպացիների հիմնած տնտեսական համակարգի մեջ:

Հնդակցի ստրուկները չհարմարվեցին պլանտացիոն տնտեսությանը: Հնդկացիները շատ զգայուն էին եվրոպացիների բերած հիվանդությունների հանդեպ և անպաշտպան: Դրա հետ մեկտեղ պարզունակ տնտեսական կյանքը նրանց չէր նախապատրաստել պլանտացիոն համակարգի կարգապահական ռեժիմին, որը ֆիզիկապես բնաջնջում էր նրանց: Եվ ոչ մի տեղ հնդակցիների ստրկությունը շահութաբեր չէր[17]: Այդ պատճառով ավելի գերադասելի էին Աֆրիկայից բերված նեգր ստրուկները: Ամերիկյան հնդկացիների ինքնությունը փոխել չհաջողվեց: Բայց այն ոչ միայն պահպանվեց, այլև կոնսերվացվեց և առաջընթաց չապրեց հանգելու հայրենիքի գաղափարին և իրողությանը:

Անգլիացիները, ինչպես դրում են ամերիկյան պատմաբաններ Թինդալը և Շին, ծովեզերքի մասերի հնդկացիներից բացի գտան ցամաքի խորքում ցրիվ ապրող և միմյանց թշնամի ցեղերի, որոնց նկատմամբ կիրառեցին «բաժանիր, որ տիրես» քաղաքականությունը: Թերևս շատ հնդկացիներ կռահեցին այդ քաղաքականության իմաստը, գրում են նույն հեղինակները և մեջբերում են հնդկացիական առաջնորդներից մեկի խոսքերը ուղղված Ջոն Ամիթին. «Ինձ հայտնել են, որ դուք եկել եք ոչ թե առևտուր անելու, այլ իմ ժողովրդին ոչնչացնելու և իմ երկրին տիրելու համար»[18]: Բնականաբար, այդ առաջնորդը «իմ երկիր» ասելով նկատի չի ունեցել հայրենիքը, այլ իր ցեղի բնակատեղին, գուցե և ուրիշ ցեղերի

---

17 John Hope Franklin, Alfred A. Moss, Jr. From Slavery to Freedom. A History of Negro Americans, sixth ed., New York, 1988, p. 31.

18 George Brown Tindal, David E. Shi. America. A Narrative History. Brief third ed., vol. I, Salt Lake City, 1993, p. 80–81.

բնակատեղիները, քանզի հնդկացիներն այդպես էլ չբարձրացան մինչև հայրենիքի գաղափարի գիտակցումը:

Հայտնի է, որ մեր ժամանակներում դեռևս մնում են նախնադարյան համայնական կարգերով ապրող ցեղեր Ամազոնի ջունգլիներում, նաև Աֆրիկայի խորքերում և պապուասների մոտ՝ Նոր Գվինեայում, Մելանեզիայի կղզիներում, Հալմահերա և Թիմոր կղզիներում: Մասնավորապես Ամազոն գետի ավազանում հանդիպում են հնդկացիական ցեղեր, որոնք, ինչպես գրում է ֆրանսիացի լրագրող Լյուսիեն Գոդարը, կարծես թե «ուղղակի հայտնվել են նախապատմությունից»[19], ցեղեր, որոնք երբեք չեն հանդիպել սպիտակամորթի:

Ամազոնի հնդկացիները ֆիզիկական բնաջնջումից փրկվելու համար հաճախ քաշվել են ջունգլիների խորքերը՝ ավելի ու ավելի հեռու, որտեղ կյանքը շատ ավելի դժվար է, գոյատևելու պայմանները շատ ավելի ծանր, կործանումը շատ ավելի հավանական: Բայց հաճախ էլ կռվել են այլ ցեղերի և սպիտակամորթ ներխուժողների դեմ՝ թե՛ ինքնապաշտպանության բնազդից դրդված և թե՛, հատկապես, իրենց բնակատեղիները պաշտպանելու և պահպանելու համար: Բայց ոչ «հայրենիքի» համար: Եվ երբ իր բնակատեղին ստիպողաբար լքած հնդկացին երազել է վերադառնալ այնտեղ, դա, անշուշտ, չի եղել «հայրենիքի» կարոտից: Գոյատևման պայմանները, որոնց նա հարմարված է եղել նախկին բնակատեղիում, նրան թվում են ամենալավը: Ձկան «հայրենիքի» գաղափարին հանգեցնող գործոններ:

Սոցիալական հոգեբան Օտտո Կլինեբերգը ուշադրություն է դարձնում շրջակա միջավայրի էթնոցենտրիկ ընկալման վրա, որը անհատի համար նշանակում է արտաքին երևույթը տեսնել ու դրա մասին դատել առանձին խմբի պատկանելության իր չափանիշներով՝ «իրականությունը ենթարկված է էթնոցենտրիկ ընկալմանը»[20]: Հայրենիքի հասկացությունը ամենից առաջ և ամենից ավելի կապված է շրջակա միջավայրի էթնոցենտրիկ ընկալման հետ: Այդ պատճառով հայրենիքը երկար ժամանակ մարդու համար եղել է շրջակա միջավայրի ամենաամբողջական և ամենալիարժեք ընկալումը. դա այն երկիրն է, «որտեղ մարդը ծնվել է ու որի քաղաքացին է: Պատմականորեն տվյալ ժողովրդին պատկանող բնատարածքը՝ իր բնությամբ, բնակչությամբ, հասարակական ու պետական կառուցվածքով, լեզվով, մշակույթով, կենցաղով, բարքերով և այլն: Օրինակ՝ հայերի բնօրրանը Հայաստանն է, որն այդ պատճառով կոչվում է բնաշխարհ հայոց»[21]:

Մեկ այլ ամերիկացի սոցիոլոգի՝ Ջոն Քուբերի կարծիքով էթնոցենտրիզմը կարող է բնութագրվել «իբրև անձանց միտումը այլ մշակույթների մասին դատելու այնպիսի ստանդարտներով, որոնք գերակայում են իրենց սեփական [մշակույթում]»[22]: Այնուհանդերձ, կա հայրենիքի հասկացության համընդհանուր ճանաչում ստացած բնորոշում:

---

19 L u c i e n G o d a r d. Le Masacre des Indiens. Paris, 1969, p. 40.
20 O t t o K l i n e b e r g. Social psychology. New York, 1954, p. 556.
21 ՀՍՀ. հ. 6, Երևան, 1980, էջ 211:
22 J o h n F. C u b e r. Sociology. A Synopsis of Principles. New York, 1955, p. 89.

Ըստ Վլադիմիր Դալի «Հայրենիքը» հայրենի հողն է «որևէ մեկի ծննդավայրը, լայն նշանակությամբ հող, պետություն, որտեղ որևէ մեկը ծնվել է, նեղ իմաստով՝ քաղաք, գյուղ»[23]: Գրեթե նույն բացատրությունն է տալիս Օքսֆորդի հրատարակած անգլերենի բառարանը, սոսկ այն տարբերությամբ, որ ծննդավայրին ավելացնում է «որևէ մեկի հայրերի», այսինքն՝ նախնիների, «երկիր» (կամ հողը), «մայր երկիր» հասկացությունները[24]: Ըստ ֆրանսիական «Մեծ Լառուս» հանրագիտարանի, հայրենիքը այն երկիրն է, որտեղ մարդը ծնվել է և որին պատկանում է իբրև քաղաքացի[25]:

Խորհրդային մեծ հանրագիտարանը տալիս է ավելի լայն բացատրություն, չհանգեցնելով այդ հասկացությունը սոսկ մարդու ծննդավայրին և քաղաքացիությանը: «Հայրենիքը», ասված է բացատրության մեջ, «պատմականորեն տվյալ ժողովրդին պատկանող տարածքն է՝ նրա բնական հարստություններով, բնակչությամբ, հասարակական ու պետական կարգով, լեզվի, մշակույթի, կենցաղի ու բարքերի առանձնահատկություններով»[26]: Ինչպես տեսնում ենք, «Հայրենիք» և «ծննդավայր» հասկացությունները միշտ չէ, որ համընկնում են և դրանք չի կարելի նույնացնել:

Իրերի բերումով մարդը կարող է ծնված լինել ոչ իր մայրենի երկրում, այսինքն՝ իր նախնիների հողում, որը հատկապես զանգվածային երևույթ է հայերի պարագայում, որովհետև բռնագաղթի պատճառով ամբողջ սերունդներ ծնվել են տարագրության մեջ: Ուրեմն հայրենիքը նախնիների հողն է, երկիրը, բնօրրանը, որին անձը պատկանում է անկախ այն բանից, թե որտեղ է ծնվել:

Պետական սահմաններում պարփակված հայրենիքը՝ պետություն-հայրենիքն արդեն նոր որակ է, թեև պետության առկայությունը հայրենիքի գոյության պարտադիր պայմանը չէ և նրա կորուստը կամ բացակայությունն ամենևին չի նշանակում, թե պետություն չունեցող կամ նրանից զրկված ազգը հայրենիք չունի: Հայրենիքի գաղափարը նախորդել է պետության հասկացությանը, բայց պետականության հաստատմամբ հայրենիքը ձեռք է բերել նոր կարգավիճակ՝ պետությունը դիտել են իբրև միջազգային իրավունքի սուբյեկտ: Պետականության պայմաններում հայրենիքի անվտանգությունն ավելի երաշխավորված է:

Լինելով դասակարգային հարաբերությունների առաջացման արդասիք, պետությունը, մի կողմից, հանդես է գալիս որպես հզորների պաշտպան ընչազուրկների և իրավազուրկների ցասումից: Դրանով նա պառակտում է հասարակությունը՝ սոցիալական անարդարությունը և գույքային անհավասարությունը պաշտպանելու և պահպանելու հողի վրա: Սակայն, մյուս կողմից, որպես երկրի պաշտպանության համար պատասխանատ-

---

23 Толковый словарь живого великорусского языка Владимира Даля. Изд. М.О. Вольф, т. III, 1912.

24 The Sortor Oxford English Dictionary on Historical Principles. Oxford, 1956, third ed., p. 680.

25 Grand Larousse Encyclopédique. Vol. 8, Paris, 1963, p. 238.

26 Большая Советская Энциклопедия, 3-е изд., т. 22, М., 1975, с. 162.

վությունն կրող և նրա անկախությունը պահպանելուն հետամուտ ուժ, պետությունը համախմբում և ամրապնդում է հայրենիքը: Հայրենիք-պետությունն է ամենագերադասելին և այն ունենալը բոլոր ազգերի բնական իրավունքն է, որը պետք է իրացվի դեռևս պետականություն չունեցող ազգերի կողմից՝ նրանց ինքնորոշմամբ, այսինքն՝ ազատ կամ արտահայտության միջոցով իրենց ազգային պատմական տարածքում: Այդ իրավունքն անվերապահորեն պետք է ճանաչվի առանց հանրաքվեի այն ազգերի համար, որոնք ցեղասպանության ու բռնագաղթի պատճառով արտաքսվել են իրենց ազգային-պատմական տարածքներից, այսինքն՝ հայրենիքից:

Հայերը ներկայումս գոյատևող հազվադեպ ժողովուրդներից են, որոնց մոտ առաջինն է ձևավորվել «հայրենիքի» գաղափարը: Գիտական նորագույն ուսումնասիրությունների համաձայն, հնդեվրոպական լեզվաընտանիքի նախահայրենիքը գտնվել է ոչ թե Կենտրոնական կամ Հարավ-Արևելյան Եվրոպայում, ինչպես նախկինում ընդունված էր հնդեվրոպաբանության մեջ, այլ Հայկական լեռնաշխարհում և նրան հարակից Հյուսիսային Միջագետքում, Փոքր Ասիայի արևելյան և Իրանական բարձրավանդակի հյուսիս-արևմտյան մասերում[27]: Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի համար հայերը Թրակիայից եկած եկվորներ չէին, ինչպես գտնում էր հնդեվրոպաբանությունը նախկինում, այլ տեղաբնիկներ, որոնք վաղ ժամանակներից անցել էին նստակեցության, զբաղվում էին երկրագործությամբ, մշակում էին հացաբույսեր (ցորեն, գարի), խաղողի տեսակներ, ընտելացրել էին կենդանիների: Մ.թ.ա. III–II հազարամյակներին նրանք պղնձի և անագի օգտագործման շնորհիվ անցան բրոնզի դարաշրջան: Հայկական լեռնաշխարհը եղել է այդ մետաղների, ավելի ուշ՝ երկաթի մշակման հնագույն կենտրոններից:

Հետևաբար, դեռևս նոր քարի դարում հայերի մոտ ձևավորվել են հայրենիքի գաղափարի ծագման բոլոր նախադրյալները՝ բնօրրանն իբրև տարածքային ընդհանրություն, էթնիկական և լեզվական ընդհանրությունը, տնտեսական գործոնները և այլն: Մինչդեռ դեպի Եվրոպա տեղաշարժված հնդեվրոպացիների մոտ՝ Ֆրանսիայի հյուսիսում, Անգլիայում, Գերմանիայում և Սկանդինավիայում անցումը տոհմատիրությունից ցեղային կարգերի, կամ տոհմային կազմակերպության անցումը տարածքայինի և պետությանը հարմարվելու ի վիճակի դառնալը[28] տեղի է ունեցել շատ ավելի ուշ: Հայերը նաև այն հնագույն ժողովուրդներից են, որոնց մոտ վաղ անցյալում ձևավորվել է պետականությունը: Մ.թ.ա. XV–XIV դդ. խեթական արձանագրություններում Հայասան հիշատակվում է որպես պետություն:

«Հայոց աշխարհ»,– այսպես է անվանել պատմահայրը իր նախնիների հայրենիքը: Իր «Հայոց պատմության» սկզբում, պատասխանելով Սահակ Բագրատունու «Թղթին», Մովսես Խորենացին գրում է. «Հայոց աշխարհի ցեղապետների և իշխանների» մասին, որոնք «ոչ իրեն ձեռքի

---

27. Տե՛ս Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы. II. Тбилиси, 1984, с. 859–956.

28 Ф. Энгельс. *Նշվ. աշխ., էջ 174:*

տակ ընկած և հավանորեն եղած իմաստուններին հրամայեցին այնպիսի պատմական հիշատակարաններ դրել, ոչ էլ մտածեցին դրսից որևէ տեղից ներս բերել իմաստության նպաստներ»[29]:

Խոսքը վերաբերում է հայոց հայրենիքի ամբողջական պատմությունը գրելուն: Խորենացին գրում է նաև՝ «Մեր երկիրը մեր նախնի Հայկի անունով կոչվում է Հայք».[30] Փավստոս Բուզանդի մոտ հանդիպում ենք «Հայաստան», «Հայոց աշխարհ», «Հայոց երկիր» ձևերին:

Անտարակույս, բոլոր այս ձևերը դեռևս անտիկ ժամանակներում և միջնադարում նշանակում էին քաղաքակիրթ աշխարհին հայտնի՝ որոշակիորեն ձևավորված հայ ազգի երկիրը, բնօրրանը: Խորենացու պատմած ժողովրդական առասպելները Հայաստանի՝ իբրև հայոց հայրենիքի ձևավորման մասին, վերաբերում են տոհմատիրության քայքայման շրջանին և հաստատում են, որ «Հայրենիք» հասկացությունը սկսել է սաղմնավորվել նախնադարյան համայնական հասարակության վերջին փուլում:

Հայաստանը հենց այն հնադույն երկրներից է, որտեղ սկիզբ է առել նստակեցությունը, արորային երկրագործությունը, մարդու կապը հողի հետ իբրև բնօրրանի և կերակրողի: Պետականությունը հայրենի հողի վրա ազգի ֆիզիկական ու հոգևոր գոյատևման ու բարգավաճման, ազգային ինքնությունը պահպանելու գլխավոր երաշխիքն է: Ուստի հայրենիքը կորցնելը կործանարար աղետ է յուրաքանչյուր ազգի համար, մանավանդ, երբ կայսերապաշտ բռնազավթիչները տիրանում են ուրիշի հայրենիքներին՝ դիմելով բնիկ ժողովրդին ցեղասպանությամբ ֆիզիկապես բնաջնջելու կամ բռնագաղթի ենթարկելով հայրենիքից վտարելու միջոցին:

Հայրենիքի շուրջ հյուսվել են խորիմաստ առասպելներ, մասնավորապես հին աշխարհում և միջնադարում, իբրև կախարդական հրաշագործ ուժի, որը սնել է մարդուն ավյունով, տվել նրան դիմադրելու աներևակայելի կարողություն և զորություն հաղթանակի հասնելու համար: Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ կա հետևյալ դրվագը. «Քավդյանները» (հավանաբար, աստղերի և մոլորակների շարժումների հիման վրա գուշակություններ անող քաղդեացիք) պարսից Շապուհ թագավորին խորհուրդ տվին հայոց Արշակ II թագավորին փորձելու համար Հայաստանից հող և ջուր բերել և չաղ տալ հատակի կեսին ու նրա ձեռքից բռնած սկզբում տանել պարսկական հողի, իսկ ապա՝ հայկական հողի վրա և ստուգել նրա պահվածքը: Պարսից թագավորը կատարում է այդ խորհուրդը, և երբ Արշակին, ձեռքից բռնած, բերում է պարսից հողի վրա, հայոց թագավորը դառնում է հլու-հնազանդ և ապաշխարում է Շապուհի դեմ արածների համար: Բայց երբ պարսից թագավորը, իբր միամտաբար, Արշակ II-ին տանում է Հայաստանից բերած հողի վրա, Արշակը սկսում է խիստ խոսել Շապուհի հետ, ըմբոստանում է նրա դեմ, անվանում է «չարագործ ծառա», որը «հափշտակել» է «տերերի բարձը» ակնարկելով Սասանյաններին իբրև ուզուրպատորների, որոնք խլել են գահը օրինական

29 Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի. Հայոց պատմություն. աշխարհաբար թարգմ. և մեկնարանությունները Ստ. Մալխասյանցի. Երևան, 1981, էջ 7.

30 Նույն տեղում, էջ 47:

տերերից՝ Արշակունիներից»[31]: Այս լեգենդը հիշեցնում է Անթեոսի ծովերի աստված Պոսեյդոնի և երկրի դիցուհի Գեայի որդու մասին հունական առասպելը, որը կռվելիս երբ ուժասպառ էր լինում, հպվում էր զետնին իր մորը և նոր ուժ էր ստանում: Եվ Հերակլեսը, կռահելով գաղտնիքը, սպանեց նրան գետնից կտրելով խեղդեց օդում:

Սերը դեպի հայրենիքը հայրենասիրությունը մարդկային զգացմունքներից ամենավեհն է, ամենասուրբը, ամենանվիրականը: «Փիլիսոփայական բառարանը» տալիս է հայրենասիրության դիպուկ և բավականաչափ լիարժեք բնորոշումը, համարելով այն «բարոյական և քաղաքական սկզբունք, սոցիալական սկզբունք, որի բովանդակությունն են կազմում սերն ու նվիրվածությունը հայրենիքի նկատմամբ, հպարտությունը նրա անցյալի ու ներկայի համար, նրա շահերը պաշտպանելու ձգտումը»[32]: Ազգերի ձևավորման, ազգային պետությունների կազմավորման պայմաններում հայրենասիրությունը դառնում է հասարակական գիտակցության մի անկապտելի բաղկացուցիչ մասը[33]:

Իսկական հայրենասերին մտահոգում է ոչ միայն հայրենիքը արտաքին թշնամուց պաշտպանելու խնդիրը, այլև նրա ներքին վիճակը, իր ժողովրդի ազատության, իրավունքների ու բարեկեցության հարցերը: Հայրենիքը պետք է ապահովված լինի ոչ միայն դրսի վտանգից, այլև ներքուստ ազատ, ինքնիշխան, ղերծ հասարակական չարիքներից ու սոցիալական թշվառությունից: Դրա ակնառու վկայությունն է Մ. Խորենացու «Ողբը»: «Ողբում եմ քեզ, հայոց աշխարհ, ողբում եմ քեզ բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհադույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանադ, խորհրդականդ ու ուսուցանողդ, վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը»[34]: Այս վշտալի ու հոգեկեղեք խոսքերով է սկսում հայրենասերի իր ողբը մեծ պատմադիրը: «Ավա՜ղ այս զրկանքներին, ավա՜ղ այս թշվառ պատմության,– շարունակում է նա:– Ի՞նչպես դիմանամ այս ցավերին, ի՞նչպես ամրապնդեմ միտքս ու լեղուս և հայրերիս (իմ պարտքս) հատուցեմ այս խոսքով (իմ) ծնունդի և սնունդի փոխարեն»[35]:

Հայրենասիրությունը շատ հեռու է կեղծ զգայականությունից և կենցաղային կամ քաղաքական սենտիմենտալիզմից: Իրականում մենք գործ ունենք հրաշքներ գործելու ընդունակ մի զգացմունքի հետ, որի ամենատառապալից գրսևորումները կապված են հայրենիքը կորցնելու և բռնությամբ հայրենազրկվելու երևույթի հետ, որին հայերը , ինչպես և հրեաները, ծանոթ են եղել հնագույն ժամանակներից: Ուստի միանգամայն բնական է, որ տարագիր հայության հոգևոր կյանքում հայրենիքի թեման մշտապես եղել և մնում է իբրև աշխարհրմբռնման մնայուն տարր, որն իր արտացոլումն է գտել պատմագրության, փիլիսոփայության, գե-

31 Տե՛ս Փ ա վ ս տ ո ս Բ ո ւ զ ա ն դ. Հայոց պատմություն. Երևան, 1987, էջ 257-259:

32 Փիլիսոփայական բառարան. Երևան, 1975, էջ 231:

33 Տե՛ս նույն տեղում:

34 Մ. Խ ո ր ե ն ա ց ի, էջ 447:

35 Նույն տեղում, էջ 449:

գարվեստական գրականության, երաժշտության ու կերպարվեստի մեջ: Կորուսյալ հայրենիքը վերադտնելու իղձը մշտապես իշխել է հայի մտքին ու հոգուն:

Անշուշտ, Մեծ Եղեռնը և դրա հետ կապված բռնագաղթը վերջին և ամենաողբերգական գրվագն է հայոց տարագրության պատմության մեջ: Մինչդեռ ամենատարբեր նվաճողների գիմագրավելու հարկադրված հայ ժողովուրդը բռնագաղթի ու հայրենազրկության դառնությունը սկսել է ճաշակել շատ ավելի վաղ՝ անտիկ դարաշրջանի վերջից և վաղ միջնադարից սկսած:

Հայերի առաջին մեծ բռնագաղթը տեղի է ունեցել 368–369 թվականներին: Փավստոս Բուզանդի վկայությամբ, պարսից արքա Շապուհ II-ը Արտաշատ քաղաքից գերի տարավ ինը հազար տուն հրեա և քառասուն հազար տուն հայ[36]: Վաղարշապատից գերի տարան տասնհինգ հազար տուն: Բոլոր չափահաս տղամարդկանց կոտորում էին, կանանց ու երեխաներին գերեվարում: Երվանդաշատ քաղաքից դուրս բերեցին 20 հազար տուն հայ և 30 հազար տուն հրեա: Բագրևանդի Զարեհավան քաղաքից տարադրեցին 14 հազար տուն հրեա և 10 հազար տուն հայ, Վան քաղաքից՝ 5 հազար տուն հայ և 18 հազար տուն հրեա, Նախճավանից՝ 2 հազար տուն հայ և 16 հազար տուն հրեա[37]: Ըստ Փավստոս Բուզանդի հրեաներին Պաղեստինից Հայաստան էր բերել Տիգրան Մեծը: Բոլոր գերիներին սկզբնապես տարել էին Պարսկաստան և ապա Շապուհի հրամանով բնակեցրել Ասորեստանում և Խուժաստանում: Փ. Բուզանդը վկայում է նաև, որ Շապուհ II-ը նորից է ներխուժել Հայաստան՝ մնացած մարդկանց կոտորելու ու տարագրելու համար և կոտորել է Սյունաց տոհմի բոլոր չափահաս տղամարդկանց ու կանանց, իսկ մանր տղաներին հրամայել ներքինացնել և տանել Պարսից աշխարհը[38]:

Միքայել Զամչյանը, հենվելով Փ. Բուզանդի այս վկայությունների վրա, ավելացնում է, որ նրանց, ում չէին տարագրում, Շապուհի հրամանով տղամարդկանց կոխկրտում էին փղերը, իսկ կանանց և մանուկներին սպանում էին ցից հանելով: Այսպես սպանեցին հազարավոր ու բյուրավոր հայերի, որոնք չէին համաձայնում հավատափոխ լինել՝ հրաժարվել քրիստոնեությունից և ընդունել զրադաշտական կրոնը[39]: Եվ Մ. Զամչյանը եզրակացնում է, որ այն, ինչ պատմում է Փ. Բուզանդը, ոչ միայն չի կարելի լսել, «ոչ լսել իսկ արժանի է՝ թող թե գրել»[40]: Հայերի տարագրության մասին խոսում է նաև Մ. Խորենացին, նշելով, որ Շապուհ II-ը հայ եպիսկոպոսներին ու քահանաներին կապված ուղարկում է Պարսից երկիր[41]:

Բնականաբար, տարագրված հայերի մոտ մշտապես ծագում էր տունդարձի խնդիրը, որը գրեթե անլուծելի էր, որովհետև կապված էր քաղաքական պատճառների հետ և հակասում էր բռնագաղթեցնողների նպա-

36 Փ ա վ ս տ ո ս Բ ո ւ զ ա ն դ, էջ 265:
37 Նույն տեղում, էջ 267:
38 Նույն տեղում, էջ 273:
39 Մ ի ք ա յ ե լ Զ ա մ չ յ ա ն ց. Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թ.). հ. Ա, Երևան, 1985, էջ 715–716:
40 Նույն տեղում, էջ 716:
41 Տե՛ս Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, էջ 367:

տակներին: Սակայն բացի բռնագաղթից հայերը հեռանում էին հայրենի երկրից նաև այլ պատճառներով՝ պարբերական ասպատակություններ, կոտորածներ, ալան-թալան և օտար նվաճողների ստեղծած անտանելի կենսապայմաններ ու բնակչության իրավազրկություն. այդ բոլորը կյանքը հայրենիքում դարձնում էին անտանելի:

VI–VII դարերից սկսած հայերին տեղահանել ու տարագրել է Բյուզանդական կայսրությունը՝ բնակեցնելով նրանց իր փոքրասիական տիրույթներում[42]: Դեռևս IV դ. վերջին, Թեոդոսիոս I կայսրը, որը մահվանից առաջ՝ 395թ. Հռոմեական կայսրությունը վերջնականապես բաժանեց իր երկու որդիների միջև՝ Հոնորիոսին տալով Հռոմը, իսկ Արկադիոսին՝ Բյուզանդիան, Հայոց վրա թագավոր կարգեց Պապի երկու որդիներին՝ Արշակին և Վաղարշակին: Արկադիոսը համաձայնության գալով Շապուհ III-ի հետ Հայաստանն ու Միջագետքը բաժանեց Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև: Այս պատճառով Արշակը թողեց իր «Հայրերի բուն թագավորությունը, Այրարատը և Պարսից բաժնում ընկած բոլոր մասը և գնաց մեր աշխարհի արևմտյան մասին տիրելու... լավ համարելով նվազ կողմին տիրել, քրիստոնյա թագավորի հպատակվելով, քան շատ տեղերի իշխել, մտնելով հեթանոսների լծի տակ: Նրան հետևեցին ու գնացին Շապուհի բաժնի նախարարություններն իրենց կանանց ու որդիների հետ, թողնելով իրենց գույքը, գյուղերն ու դաստակերտները»[43]:

Հեռացած նախարարներին գրած նամակում հորդորելով նրանց ետ վերադառնալ, Շապուհ III պարսից արքան երաշխավորում է, որ նրանցից յուրաքանչյուրը ետ կստանա իր ունեցվածքը: «Երդվում ենք կրակով, ջրով և մեր անմահ նախնիքների փառքով, որ այս բանը մենք անում ենք առանց նենգության և խաբեության և անդրդվելի կպահենք»: Եվ Շապուհը սպառնում է բռնագրավել չվերադարձողների ունեցվածքը: «Իսկ ովքեր չեն լսի մեր այս հրամանին,– սպառնաց պարսից արքան,– մենք հրամայեցինք, որ նրանց տները գյուղերով ու դաստակերտներով հանդեմ արքունիք գրավեն»[44]:

Բերված նամակի առաջին մասը հետաքրքրական է նրանով, որ վերաբերում է հայրենիք վերադառնալու պարագայում երաշխիքներ տալու խնդրին: Մինչդեռ երկրորդ մասը վկայում է բռնագաղթվածի նկատմամբ ցուցաբերվող օրինազանցությունը: Ըստ Խորենացու, հայոց նախարարները, որոնք իշխանություն ունեին պարսից բաժնում ընկած գավառներում, վերադարձան իրենց բնակության տեղերը, երբ Շապուհ III-ը Արշակունի թագավոր նշանակեց և երբ տեսան պարսից թագավորի «Երդման թուղթը», այսինքն՝ հավատացին նրա տված անվտանգության երաշխիքին[45]:

---

42 Միջնադարում կատարված հայկական արտագաղթերի մասին տե՛ս Вардгес Микаелян. Армянские переселения в средние века.– Вестник обществ. наук АН Армении, 1988, №2, с. 59–65; Նույն՝ Հայկական արտագաղթերը (VI–XIX դդ.).– Էջեր հայ գաղթավայրերի պատմության. Երևան, 1996, էջ 21–40: Տե՛ս նաև Ա. Ալպոյաճյան. Պատմություն հայ գաղթականության. հ. Բ, Կահիրե, 1955:

43 Մովսես Խորենացի, էջ 381:

44 Նույն տեղում, էջ 383:

45 Նույն տեղում:

Արդեն ասվեց, որ դեռևս VI դ. Բյուզանդական կայսրությունը հայերին տեղահանելով հայրենիքից, վերաբնակեցրել է կայսրության հեռավոր մասերում: Սեբեոսը գրում է, որ Մավրիկիոս (Մորիկ) կայսրը (582–602 թթ.) վարում էր «Հայաստանն առանց հայերի» քաղաքականություն՝ առաջին հերթին Հայաստանից հեռացնելով հայկական զինված ուժերը: Հազիվ թե հարկ կա մեկնաբանելու այս քայլի իմաստը: Ըստ Սեբեոսի, Մավրիկիոսը նամակ է գրել պարսից Խոսրով թագավորին, որտեղ ասված էր. «Մեր երկուսի միջև խոշոր և անհնազանդ մի ազգ կա... Եկ, ասում է նա, ես իմ մասում գտնված (հայերին) հավաքեմ և տեղափոխեմ Թրակիա, իսկ դու քո մասի հայերին հավաքիր և տեղափոխիր Արևելք, եթե կմեռնեն՝ մեր թշնամիները կմեռնեն, իսկ եթե կմեռցնեն՝ մեր թշնամիներին կմեռցնեն»[46]:

Ի կատարումն այս մտադրության, Մավրիկիոսի հրամանով Հայաստանում կազմվում է երկու գունդ՝ մեկը Սմբատ Մամիկոնյանի, մյուսը՝ Սմբատ Բագրատունու ղեկավարությամբ՝ Թրակիա ուղարկելու նպատակով: Սմբատ Մամիկոնյանն իր գունդը Սեբաստիայի վրայով տարավ Կոստանդնուպոլիս: Սակայն մյուս գունդը չկամեցավ լքել հայրենիքը, ապստամբեց և բարձրացավ լեռները: Ապստամբներին գլխավորում էր Սմբատ Բագրատունին: Նրանց միացան հայ նախարարներ, որոնք գժգոհ էին Բյուզանդիայից: Դեռևս հայրենիքում գտնվող ապստամբներին հուզում էր հայրենիք վերադառնալու խնդիրը, որը ծառանալու էր նրանց առջև տարագրության դեպքում: Ըստ Սեբեոսի, նրանք չէին ցանկանում մեռնել Թրակիայում: Նրանք ցանկանում էին իրենց աշխարհում մեռնել:

591 թ. Պարսկաստանը և Բյուզանդիան երկրորդ անգամ Հայաստանը բաժանեցին միմյանց միջև: Խախտվեց երկրի և նրա բնակչության միասնությունը, հայերը օտարանում էին միմյանցից, խորթանում և արտագաղթն ու ուծացումն օտար երկրներում դառնում էին ավելի ու ավելի իրական:

Հայերի զանգվածային արտագաղթը աղետալի չափերի հասավ արաբական տիրապետության ժամանակ, երբ Բյուզանդիա էին արտագաղթում ոչ միայն ազնվականները, այլև աշխատավորական զանգվածները: Բյուզանդիան խրախուսում էր հայության արտագաղթը՝ վարելով Հայաստանը հայաթափ անելու կանխամտածված քաղաքականություն: IX դ. 70-ական թվականներին բյուզանդացիները ոչնչացրին կամ զանգվածաբար Արևմուտք աքսորեցին պավլիկյաններին, այն բանից հետո, երբ Վասիլ I կայսրը ճնշեց այդ աղանդի հետևորդների շարժումը Փոքր Հայքում և Մեծ Հայքի արևմտյան գավառներում: «Հազարավոր հայերի բռնությամբ տեղահան արեցին և բնակեցրին կայսրության հյուսիս-արևմտյան սահմանագլխին, հատկապես Մակեդոնիայում: Այդ ժամանակաշրջանից սկսած Բալկանյան երկրներում՝ Բուլղարիայում, Հունաստանում և Ռումինիա-

46 Սեբեոսի եպիսկոպոսի պատմություն, չորրորդ տպագր., Երևան, 1939, գլ. ԺԳ, էջ 49 (1979թ. հրատ. մեջ, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, նամակը ԺԵ գլխում է, էջ 86):

յում սկսեցին հիմնվել հայկական գաղթավայրեր»[47]: Հայերի մեծ զանգվածներով արտագաղթը շարունակվեց X–XI դդ. և հետագայում դեպի Փոքր Ասիայի արևելյան և Ասորիքի հյուսիսային նահանգները[48]:

Արաբական տիրապետության հենց սկզբից հայերը ստիպողաբար արտագաղթում էին այն պատճառով, որ նվաճողները զանգվածաբար վերաբնակեցնում էին արաբական ցեղեր Պաղեստինից, Եմենից, Խորասանից և այլ վայրերից, որոնց տրվում էին հայերից խլված ամենաարգավանդ հողերը և արոտավայրերը, ինչը վկայում է Թովմա Արծրունին: «Արաբական ցեղերի բնակեցումը Հայաստանում ուժեղ կերպով քայքայում էր երկրի էթնիկական և տերիտորիալ ամբողջությունը ու ճանապարհ հարթում արաբական մեծ ու փոքր էմիրությունների առաջացման համար»[49]:

1021թ. Վասպուրականից Սեբաստիայի բանակաթեմ է գաղթել մոտ 70 հազար հայ: Հայերի արտագաղթը հատկապես ուժեղացել է XI–XV դդ. սելջուկների, մոնղոլների և թուրքմեն-թաթարների տիրապետության շրջանում: Հայերը գաղթել են Վրաստան, Հյուսիսային Կովկաս, Ուկրաինա, Մերձվոլգյան երկրներ, Ղրիմ, Մոլդավիա, Լեհաստան, Բուլղարիա, Ռումինիա, Փոքր Ասիայի ծովամերձ շրջանները և Կիլիկիա: Տարագիր հայերը տարբեր երկրներում ստեղծել են շուրջ 25 գաղթօջախ[50]:

Գաղթավայրերում, անկախ ապրուստի պայմաններից, տարագիր հայերը ապրում էին հայրենիք վերադառնալու հույսով և իրենց ինքնությունը, հավատը և ավանդույթները պահպանելու համար կառուցում էին վանքեր, եկեղեցիներ, կրթական օջախներ, ստեղծում էին միություններ, ձգտում էին ձեռք բերել ինքնակառավարման իրավունք: XI դ., երբ սելջուկ-թուրքերը գավթեցին Անին, քաղաքի և շրջակայքի բնակչությունը մասամբ հեռացավ Հայաստանից՝ բնակություն հաստատելով Կասպից ծովի հյուսիսային ափերին, իսկ երբ մոնղոլները նվաճեցին Հայաստանը, Անիից դարձյալ հեռացան բնակիչներ՝ շուրջ 40000 մարդ, դեպի Աստրախան և Սարայ: XIII–XV դդ. տասնյակ հազարավոր հայեր՝ մասնավորապես Կիլիկիայից, գաղթել են դեպի Արևմուտք և հաստատվել Վենետիկում, Ջենովայում, Հռոմում, Ֆլորենցիայում, Պիզայում, Բերուջում, Մարսելում, Բրյուսելում, Ամստերդամում:

Հայերի տարագրության պատմության մեջ առանձնակի տեղ ունի Շահ-Աբաս I-ի (1571–1629թթ.) կազմակերպած տեղահանությունը և բռնագաղթը դեպի Պարսկաստան 1603 թ., որը մանրամասն նկարագրել է դեպքերի ժամանակակից և ականատես Առաքել Դավրիժեցին[51]:

Շահ-Աբաս I-ին Դավրիժեցին բնութագրում է իբրև «երկրների ավերիչը, քրիստոնյա ազգերի վատնիչը, սատանայի բնակարանը»[52], իսկ հայերին Պարսկաստան քշել-տանելու հրամանը՝ «աշխարհակործան ու

---

47 Հ. Գ. Ժամկոչյան, Ա. Գ. Աբրահամյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան, Ս. Պ. Պոռոսյան. Հայ ժողովրդի պատմություն. Սկզբից մինչև XVIII դարի վերջը. Երևան, 1975, էջ 643:

48 Նույն տեղում:

49 Նույն տեղում, էջ 363:

50 ՀՍՀ. հ. 2, Երևան, 1976, էջ 668:

51 Առաքել Դավրիժեցի. Պատմություն. Երևան, 1988:

52 Նույն տեղում էջ 42:

դաժան»[53]: Այս բռնագաղթն հայերի՝ ուշ միջնադարի վերջին մեծ տարադրությունը եղավ, որը հավասարազոր էր ազգային մեծ աղետի, և որից հետո հայրենիք վերադառնալու խնդիրը ծնեց բավականաչափ բարդ, բայց խորապես հատկանշական իրադարձություններ: Բռնագաղթի սկիզբը Դավրիժեցին համեմատում է հողմակոծ հրի հետ՝ հրդեհի հետ, որի բոցերը ահագնանում են քամու շնչից: «Հրամանը թագավորի կողմից ընդունելուց հետո,– գրում է Դավրիժեցին,– յուրաքանչյուր զորավար իր գնդով ելավ դիմեց հայոց աշխարհի հրամայված գավառը իբրև հողմակոծ հուր, որ անցնում է եղեգնուտով: Տագնապալից աճապարանքով գավառների բոլոր բնակիչներին շուտափույթ շորթելով իրենց բնակավայրերից և վտարելով իրենց տեղերից ինչպես հոտ ու նախիր բազմաթիվ ոչխարների ու տավարների առաջները անելով, բռնությամբ քշեցին, բերին հասցրին Արարատյան գավառը»[54]:

Պարսից զորքերը, որ ժողովրդին դուրս էին քշում գյուղերից ու քաղաքներից, բոլոր շենները, տները, բնակավայրերը անխնայորեն, ինչպես նաև խոտի, հարդի, ցորենի, գարու և այլ պիտույքների ամբարանոցները հրկիզում ու ոչնչացնում էին[55]: Եվ Դավրիժեցին ընդգծում է, որ դա արվում էր ոչ միայն ետեից եկող օսմանյան զորքերին առանց պարենի թողնելու և ծանր կացության մեջ դնելու համար, այլև, որպեսզի «տեղահանված ժողովուրդը այդ տեսնելով հուսահատ լինի ու ետ չդառնա»[56], այսինքն՝ դա արվում էր տարագրված հայության վերադարձը հայրենիք անհնարին դարձնելու նպատակով:

Այն, ինչ նկարագրում է Ա. Դավրիժեցին, իսկական բռնագաղթ է, դաժան բռնագաղթ: Պարսիկները, գրում է Դավրիժեցին, ժողովրդին հասցնելով մինչև Ջուղա, չթույլատրեցին հանգստանալ, նեղում էին նրան, քշում դեպի դետը: «Ոմանց մահու հարվածներով ծեծում էին, ոմանց քթերն ու ականջները կտրելով, ոմանց էլ գլուխները կտրում էին ու ցցում էին ձողի վրա, ինչպես Առաքել կաթողիկոսի եղբորը, որի անունն էր Օհանջան. սրա և մի այլ մարդու գլուխները կտրեցին և Արտքս դետի ափին ձողի վրա ցցեցին: Սրանք և սրանցից առավել կտտանքների խոշտանգումների էին ենթարկում ժողովրդին իբրև ահ ու սարսափ ժողովրդին և տեսնողներին, որպեսզի գետը չտապ անցնեն»: Բավարար թվով նավ և արկղ չկար, որպեսզի օգտագործեին գետանցի ժամանակ: Պարսից զինվորները շրջապատել էին ժողովրդին, որպեսզի ոչ ոք չփախչի, փայտով ծեծում, ջարդում էին ու լցնում գետը: «Իսկ թշվառ ժողովուրդը նայում էր իր առջև տեսնում էր ծովի նման անհուն գետը, որը խեղդում էր, իսկ ետևից պարսից սուրն էր, որ սպասում էր, և փախուստի ոչ մի հույս չկար: Ընդհանուր կերպով աղիողորմ ողբեր, հորդ արցունքներ աչքերից թափելով երկրորդ Արաքսն էին գոյացնում. իսկ լացի, հառաչանքների, ճիչերի, վայների, կսկծանքների, մորմոքների ձայները միմյանց խառնվելով ուժգին

53 Նույն տեղում, էջ 43.
54 Նույն տեղում:
55 Նուն տղում:
56 Նույն տեղում:

գոռում-գոչյուններ էին առաջացնում, բայց ողորմածություն ու փրկություն ոչ մի տեղից չկար»[57]:

Բռնադաղթվածներին հասցրին Սպահան, բնակեցրին քաղաքում և շրջակա գավառներում, նաև Շիրազի երկրամասում: Բռնագաղթի իրական նպատակների մասին Շահ-Աբասը շեշտել է իր հետևյալ խոստովանության մեջ, որը մեջբերում է Ա. Դավրիժեցին. «Դուք այդ դատարկ սիրալիրության համար, որ տածում եմ քրիստոնյաների հանդեպ, մի վշտանաք ու ինձ մեղադրեք,– ասել է պարսից արքան,– որովհետև ես ծախսերով, ջանքով ու հնարներով հազիվ կարողացա նրանց այս երկիրը բերել: Ես նրանց չբերեցի իրենց օգուտի համար, այլ որպեսզի մեր երկիրը չենացվի ու մեր աղդը ավելանա: Եվ այժմ քրիստոնյա ազգի մարդկանց, որոնք իրենց երկրից եկել են ու այժմ մնում են, եթե նրանց ամենքին մաս առ մաս կոտորենք, հոդ առ հոդ բաժանենք, նրանցից ոչ ոք մեր կրոնին չի դառնա, նաև մյուսները խրտչելով կսկսեն թաքուն փախչել և վերադառնալ իրենց երկիրը, իսկ մեր աշխատանքը իզուր կանցնի: Այդ պատճառով եմ ես նրանց նկատմամբ սիրալիր, որպեսզի դրանով կապված մնան մեր երկրում...»[58]:

Շահ-Աբասն այն կարծիքին էր, որ տարագրված հայերի մեծերը կմեռնեն, իսկ Պարսկաստանում ծնված ու մեծացած սերունդները կմոռանան Հայաստանի մասին: Ա. Դավրիժեցին գրում է, որ տարագիրները մտադրվել էին վերադառնալ իրենց երկիրը, բայց պարսիկները թույլ չէին տալիս: Մինչև իսկ Պարսկաստանում ծնված հայերից ոմանք կամենում էին Հայաստան գալ, բայց պարսիկները չէին թողնում[59]:

Ա. Դավրիժեցին Շահ-Աբասին բնութագրում է իբրև «զգուշավոր ու կանխահոդ մարդու, որը «հարաժամ» խորհում էր այն մասին, թե ինչպես կանխարդելի հայերի վերադարձը հայրենիք, քանզի Հայաստանում ծնված տարագիրները «չատ էին բաղձում Հայաստան գնալ»[60]: Զարմացած Շահը հարցնում էր, թե ի՞նչու հայերը չեն ցանկանում մնալ Սպահանի չեն երկրում, որը թիկունքային երկիր է, իսկ «Հայաստան աշխարհը սահման է ու թշնամու բերան, միշտ ավար ու գերություն»[61]: Նրան պատասխանում էին, թե Հայաստանը լի է բարիքներով, այնտեղ առատություն է ու էժանություն, իսկ Պարսկաստանում «սուղ է ու թանկություն»: Սակայն իրականում պատճառը միանդամայն այլ էր. «Այնտեղ են իրենց հայրերի ու նախնիների գերեզմանատները, վանքերն ու ուխտատեղիները, որտեղ սրբերի դամբարաններն են և մանավանդ մեծահանդես աթոռը՝ Սուրբ Էջմիածին, ուր գտնվում է Գրիգոր Լուսավորչի սուրբ աջը, որով օրհնվում է սուրբ մեռոնը, որտեղից (Էջմիածնի մեռոնը) գնալով սփռվում է ամբողջ աշխարհում ապրող հայերի մեջ, որտեղ էլ լինեն»,– բացատրում է Ա. Դավրիժեցին:

«Հայրենիք» հասկացությունը պատմության ընթացքում կրել է էական փոփոխություններ, ինչպես էթնիկական, այնպես էլ պատմաաշխարհագրական իմաստով: Շատ տարածքներ, լինելով որոշակի ցեղերի կամ ցե-

57 Նույն տեղում, էջ 45:
58 Նույն տեղում, էջ 62:
59 Նույն տեղում, էջ 63:
60 Նուն տեղում, էջ 160-161:
61 Նույն տեղում, էջ 161:

դախմբերի բնօրրան, այդպես էլ չդարձան նրանց համար մնայուն հայրենիք: Եկվոր նվաճողների հետ ձուլվելով որոշ ժողովուրդներ կորցրեցին իրենց էթնիկական առանձնահատկությունները և հայրենիքները: Հին եգիպտացիների հետնորդները՝ ղպտիները, իրենց հայրենիքում այսօր ազգային ու կրոնական փոքրամասնություն են(քրիստոնյաներ), իսկ Եգիպտոսը արաբական նվաճումից հետո դարձել է արաբական պետություն և միջազգայնորեն ճանաչված է իբրև արաբ ժողովրդի պետական սահմաններով միմյանցից բաժանված հայրենիքներից մեկը: Ժողովուրդների մեծ զայթի, այնուհետև, քոչվոր անասնապահ թուրքական ցեղերի և, ապա, թաթար-մոնղոլների Հարավային Սիբիրից, Ալթայից և Միջին Ասիայից դեպի Արևմուտք դանդվածաբար տեղաշարժվելու պատճառով փաստորեն անհետացան մի շարք ժողովուրդների հայրենիքները Փոքր Ասիայում:

Բայց իր լեռնաշխարհում բնակվող հայ ժողովուրդը պահպանեց իր էթնիկական ինքնությունը, ուրույն քաղաքակրթությունը և հայրենիքի ու նրա օրինական տերը լինելու գաղափարը: Այսօր էլ, երբ նա ցեղասպանության ե բռնագաղթի պատճառով կորցրել է իր էթնիկական տարածքի, այսինքն՝ բնօրրանի ու հայրենիքի 9/10 մասը, հայ ազգը այդ հայրենիքից մնացած ե պետականորեն վավերացված մասերում (ՀՀ-ում և ԼՂՀ-ում) և դրանից դուրս (սփյուռքում) պահպանում է նրա բռնազավթված մասը ետ ստանալու պահանջատիրական իրավունքը: Ավելին, նա վստահ է, որ վաղ թե ուշ կիրացնի այդ իրավունքը, չնայած այն բանին, որ լինելով պատմական կատեգորիա, հայրենիքը, այնուամենայնիվ, չունի միջազգային-իրավական կարգավիճակ, թեև արդարությունը պահանջում է, որ յուրաքանչյուր ժողովրդի բնօրրանը, որպես ազգային-պատմական տարածք, ճանաչվի իբրև նրա անվիճելի և անկապտելի սեփականությունը, անկախ այն բանից, թե տվյալ ժողովուրդը պետականություն ունի թե ոչ: Դա նշանակում է, որ դեռևս անկախություն չնվաճած և ուրիշ պետության ենթակայության տակ գտնվող ուզած կարգավիճակով ապրող ժողովուրդը մշտապես մնում է իր ազգային-պատմական տարածքի միակ օրինական տերը: Մինչդեռ ժամանակակից միջազգային իրավունքում հայրենիքը չի հիշատակվում իբրև միջազգային-իրավական կատեգորիա: Տարածքի հասկացությունը դիտարկվում է սոսկ իրավական ռեժիմի տեսանկյունից և բաժանվում է երեք տիպերի.

1. պետական տարածք,
2. միջազգային ռեժիմ ունեցող տարածք,
3. խառը ռեժիմ ունեցող տարածք[62]:

Անգլիացի իրավագետ, միջազգային իրավունքի ճանաչված գիտակ Յան Բրոունլին նշում է տարածքի չորս ռեժիմ.

1. տարածքային ինքնիշխանություն,
2. տարածք, որի վրա չի տարածվում որևէ պետության կամ պետությունների խմբի ինքնիշխանությունը և որն ունի իր սեփական իրավավիճակը, օրինակ մանդատային և խնամակալական տարածքները, որոնք, ի դեպ, այլևս չկան,
3. res nullius (ոչ ոքի տարածք),

62 Международное право. М., 1995, с. 71.

4. res communis (բոլորին պատկանող տարածք)[63]:

Այս բաժանումից պարզվում է, որ հայրենիքը, որը համընկնում է էթնիկական տարածքի հետ, միշտ չէ, որ ունենում է պետության կարգավիճակ: Բայց դրանից այն չի դադարում լինել այս կամ այն ժողովրդի հայրենիքը, այսինքն՝ նրա սեփականությունը: Եվ եթե որևէ ժողովուրդ կամովին հրաժարվում է անկախ պետականությունից և միանում մեկ այլ պետության հետ, դա ամենևին չի նշանակում, թե կորցնում է իր հողի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքը: Առավել ևս, երբ նա բռնությամբ զրկվում է պետականությունից և նրա հողը բռնագավթվում է ուրիշի կողմից, չի դադարում լինել երկրի սեփականատերը, ուստի լիիրավ է պայքարել այդ հողը և ունեցվածքը ետ ստանալու համար: Այսպես, անհեթեթություն կլիներ պնդել, թե Լեհաստանի բաժանումների ժամանակ լեհ ժողովուրդը դադարել էր լինել իր հողի տերը:

Ճշմարտությունն այն է, որ սկզբում ինքնիշխանությունը (սուվերենությունը) դիտվել է իբրև ազգի, ժողովրդի ատրիբուտը և ապա՝ պետության հատկանիշ: Այդպես է գրվել հարցը թե՛ ամերիկյան և թե՛ ֆրանսիական հեղափոխությունների ժամանակ: Այստեղից էլ բխում է ազգի, ժողովրդի սեփականատիրոջ իրավունքն իր ազգային-պատմական տարածքի նկատմամբ, նաև այն դեպքերում, երբ տվյալ ժողովուրդը բռնությամբ արտաքսվել է իր ազգային-պատմական տարածքից, քանզի բռնությունը սաստկացնում է կատարված հանցանքը և չի կարող այն արդարացնելու միջոց ծառայել: Յուրի Բարսեղովը միջազգային իրավունքի տեսակետից ցույց է տալիս, որ գոյություն ունեցող նորմատիվ նյութը «պարզորոշ և աներկբայորեն հաստատում է, որ տարածքային ամբողջականության սկզբունքը կիրառելի է ոչ միայն պետության՝ պետական տարածքի վերաբերմամբ, այլև անմիջապես ժողովրդի վերաբերմամբ, երբ խոսքը գնում է նրա ունեցվածքի՝ էթնիկական տարածքի մասին: Միջազգային իրավունքը պաշտպանության տակ է առնում էթնիկական տարածքը»[64]:

Եվ այսպես, գոյություն ունի պետության տարածք և էթնիկական տարածք և այս երկու հասկացությունների միջև տարբերությունն ընկած է պետության տարածքային ամբողջականության և ժողովրդի տարածքային ամբողջականության տարբերության հիմքում: Անշուշտ, այդ երկու հասկացությունները կարող են և համընկնել:

Էթնիկական տարածքի հասկացությունը ծագել է ժողովուրդների միջև աշխարհագրական միջավայրի բաժանման պատմական գործընթացում: «Այդ գործընթացը խաչաձևել, բայց ոչ միշտ է համընկել պետական տարածքի ձևավորման հետ»,– գրում է Յու. Բարսեղովը[65]: *Նա միաժամանակ շեշտում է, որ մինչև իսկ պետական տարածքի պարագայում պետությանն իբրև ժողովրդի կողմից վստահված անձ և ներկայացուցիչ և իր տարածքի նկատմամբ բարձրագույն իրավունքը կրողը, չի կարող տնօրինել այն առանց բնակչության համաձայնության*[66]: *Հետևաբար, պետութ-*

---

63 Я. Б р о у н л и. Международное право, кн. 1-я. М., 1977, с. 173.

64 Ю. Г. Б а р с е г о в. Самоопределение и территориальная целостность. М., 1993, с. 37.

65 Նույն տեղում, էջ 33:

66 Նույն տեղում, էջ 34:

յան ընդհատվելու դեպքում նրա իշխանության տակ եղած տարածքը չի դառնում «ոչ ոքի» հողը, այսինքն՝ չի կորցնում տիրոջը, քանզի պատկանում է այն ընակեցնող ժողովրդին: Իսկ երբ տարածքը բաժանվում է մի քանի պետությունների միջև, ժողովուրդը պահպանում է տարածքային ամբողջականության իրավունքը[67]*: Ավելին, մենք դիտենք դեպքեր, երբ այդ իրավունքն իրացվել է, ինչպես Լեհաստանի պարագայում:*

Մնում է եզրակացնել, որ էթնիկական տարածքը համընկնում է հայրենիքի հասկացության հետ, թեև հայրենիքի գաղափարը շատ ավելի հարուստ է և չի սահմանափակվում լոկ տարածքի հանգամանքով: Ուստի միջազգային իրավունքը ճանաչում է հայրենիքը և առնում է այն պաշտպանության տակ, թեև ոչ ուղղակիորեն, այլ միջնորդավորված՝ իբրև էթնիկական տարածքի, տվյալ ազգին պատկանող տարածքի: Հետևաբար, բռնությամբ հայրենազրկված և իր հայրենիքից արտաքսված ժողովուրդը պահպանում է իր էթնիկական տարածքի (հայրենիքի) նկատմամբ սեփականատիրոջ, հետևարար, այնտեղ վերադառնալու իրավունքը:

Եթե ազգի հայրենիքը բաժանված է տարբեր պետությունների միջև և միչև իսկ նրա մի մասում կա դրա հետևանքով հատվածների բաժանված ազգի պետականությունը, միևնույն է, ազգը պահպանում է հայրենիքը վերամիավորելու և դրա շնորհիվ վերամիավորվելու անվերապահ իրավունքը նախ՝ ազգի էթնիկական տարածքի ամբողջականության միջազգային-իրավական նորմի տեսանկյունից, և ապա՝ ազգի ինքնորոշման միջազգային-իրավական սկզբունքի տեսանկյունից, քանի որ այդ իրավունքը ճանաչված է ազգի, որպես ամբողջի, և ոչ թե նրա առանձին հատվածների կամ հատվածի համար:

Ահա թե ինչու բաժանված ազգերի և նրանց հայրենիքների վերամիավորման հարցը, որը շարունակում է դեռևս գոյություն ունենալ աշխարհում, այդ թվում նախկին ԽՍՀՄ-ի, մասնավորապես Կովկասյան տարածաշրջանում (Հայաստան և Արցախ, Հյուսիսային և Հարավային Օսեթիաներ, լեզգիները՝ Դաղստանում և Ադրբեջանում և այլն): Այդ հարցի դրական լուծումը հավասարազոր է տարադիրների հայրենիք վերադառնալուն, քանզի բաժանված, բեկորված հայրենիքի վերամիավորումը հավասարազոր է կորուսյալ հայրենիքը վերագտնելուն: Ուստի մենք դարձյալ գործ ունենք ոչ միայն հայրենիքը վերադարձնելու, այլև որոշ իմաստով հայրենիք վերադառնալու գաղափարի հետ: Բնականաբար, այդ գաղափարը հնագույն ժամանակներից սկսած եղել է շատ ավելի սուր և ընդգծված բռնի հայրենազրկության դեպքերում, երբ այս կամ այն ժողովուրդը ենթարկված է եղել բռնագաղթի և դատապարտված երկարատև տարագրության: Հետևաբար, հայրենիք վերադառնալու գաղափարը գրեթե նույնքան հին է, որքան հայրենիքն իբրև պատմական կատեգորիա:

---

67 Նույն տեղում:

РОДИНА КАК ИСТОРИЧЕСКАЯ КАТЕГОРИЯ. ИЗГНАНИЕ И РЕПАТРИАЦИЯ

АКОП АКОПЯН

Р е з ю м е

В статье рассматривается проблема возникновения понятия "родины" как исторической категории и ее формирования у армян. На основании исторического материала доказывается, что экономические и этнические предпосылки образования родины: оседлый образ жизни, производство продовольствия земледельческим трудом и одомашнение животных, а также формирование армянского этноса, принадлежащего к индоевропейской семье и являющегося ядром антропологического типа арменоид, происходили в неолите, на Армянском нагорье и на прилегающих к нему землях. Таким образом, армяне – народ автохтонный и вышеуказанный регион является его колыбелью или исторической родиной. Согласно хеттским надписям XV в. до н.э. еще тогда колыбель армян - страна Хайаса-Аззи была независимым государством, а это означает, что армяне имели государственную организацию, по крайней мере , 3500 лет тому назад. Родина армян с древнейших времен подвергалась периодическим нашествиям со стороны различных завоевателей, и оккупанты часто депортировали коренное население Армении, переселяя армян в соседние страны. По свидетельству армянских историков – Мовсеса Хоренаци, Павстоса Бузанда, Себеоса и Аракела Даврижеци – массовые изгнания армян из своей родины и лишение их отечества (апатридизм), берет начало в последний период античности и в начале раннего средневековья и продолжается в последующие столетия вплоть до геноцида 1915 – 1923 гг. С тех пор существует проблема возвращения армян на родину, до сих пор нерешенная. Поскольку понятие "родины" не является международно-правовой категорией, право армян вернуться на свою родину может быть признано и реализовано опосредованно – принимая за основу право народа на свою этническую территорию. Этот аргумент кажется чрезвычайно важным, ибо международное право защищает право народа на свою этническую территорию и, как утверждает хорошо известный специалист по международному праву Ю. Барсегов, принцип целостности применим не только к государственной, но и к этнической территории.

HOMELAND AS A HISTORICAL CATEGORY. EXPATRIATION AND REPATRIATION

HAKOB HAKOBYAN

S u m m a r y

In the present article the author discusses the problem of the origin of the concept of the "homeland" as a historical category, and its formation among Armenians. He proves, on the grounds of historical material, that the economic and ethnic pre-conditions of coming into being of the concept are - the settled way of life, human control over the reproduction of plants and

animals (domestication), and the formation of the Armenian ethnic community, belonging to the Indo - European family, and constituting the main body of the antropological race of Armenoids, taken place in neolithic age, on Armenian Highland and contiguous territories. Thus, the Armenians are autochthous and the region mentioned is their cradle or historic homeland. According to the Hittite inscriptions of the 15th century B.C., as far back as that time, the Cradle of the Armenians-Hayasa-Azi was an independent state, which means that at least 3500 years ago the Armenians created their state organization. The Armenian homeland from ancient times was being invaded by different conquerors, who often deported its native population, moving the Armenians to new places in the neighbouring countries. Armenian historians–Movses Khorenatsi, Pavstos Byuzand, Sebeos, Arakel Davrizhetsi indicate that the mass expatriation (apatridism) of the Armenians begins in the last period of the Antique times and at the beginning of the early Middle Ages, and continues during the following centuries until the genocide of 1915–1923. Since that time the problem of return of the Armenians to their homeland exists, and remains unsettled. As the concept of "homeland" is not a category of the International law, the right of the Armenian people to its native land can be recognized and realized in an intermediate way, based on the right of the people to its ethnic territory. This argument seems extremely important, because the International law defends the right of the people to its ethnic territory. As Yuri Barseghov, a well-known specialist in the International law, asserts, the principle of the territorial integrity is applicable not only to the state territory, but to the ethnic territory, as well.